

պակասիր, սպառաժին նորն յաջորդելով. մինչ աղքատներն «ի ներքուստ ի վեր նային, եւ սեղանք նոցա դատարկ՝ յոգոց հանիցեն»։ Աւելի տխուր էր դուրս մնացողաց վիճակը, որոնք՝ կ'ըսէ՝ բազմականաց ձայները միայն կը լսեն, իրենց արհամարհութիւնը կը խոցէ իրենց սիրտը, «վարանին, զօղեալք եւ ակնկորեալք նըստին» (59), եւ ակնածութեամբ մունջ կը մնան (60)։

«Զեղխելոց ժողովոյն» ընծայուած այդ մեծարանքը նախատինք մը կը համարի բեմբասացը՝ նետուած Քրիստոսի դէմ, որ հրաւիրուած էր աղքատաց ձեռով (61)։ Կը յիշեցնէ՝ թէ ազապն «աղքատաց կոչունք» մ'է զոր պէտք չէ եղծանել, անոր մէջ հզօր եւ անկարօտ մարդոց պատիւներ շոայլելով (58)։ Մեծամեծ բարեկամներդ մեծարելու համար, կ'ըսէ, ունիս երեք հարիւր վաթսուն եւ հինգ օր. գոնէ անոցմէ մին աղքատաց եւ հոգւոյդ նուիրէ, կոչելով լոկ «զորբօ եւ զայրիս, զնեղեալս եւ զտառապեալս, զխեղս եւ զկոյրս եւ զկազս, զկարօտեալսն եւ զգերիան, եւ զամենայն քաղցեալս եւ զանմխիթարսն» (59)։ Ուշագրաւ է այս ամբօխին մէջ չքաւոր «այրեաց» ներկայութիւնը. եւ որ զիւրաւ կը մեկնուի, երբ